

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝



Տիպիկ

Լ. Գրիգորյան

№ 01/ՆԱԿԻՔԱՍԵՐ

2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լորի միջնակարգ դպրոց

8-րդ դասարան

Գևորգյան Զարինե Սմբատի

<<2023-2024թթ.>> ուսումնական տարի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ (կրճատումով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:

V. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆՆԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ

15. Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

2. Կարողություններ և հմտություններ Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Չափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակաձում (ինդուկցիա), արտաձում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

1) Ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա. գիտելիքներ ձեռք բերել՝ զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,

բ. վերլուծել՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով,

գ. մտահանգումներ անել՝ ամբողջացման, հակադրման, բնութագրման, հիմնավորման, ամփոփման, կշռադատման միջոցով,

դ. ընդհանրացնել և համադրել՝ վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,

ե. հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակները և գտնել լուծումներ,

զ. երևույթների նկատմամբ դրսևորել առողջ հետաքրքրություն և քննադատական մոտեցում,

է. վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ, ը. ինքնուրույն որոշումներ ընդունել և հիմնավորել,

թ. նպատակներ դնել, մշակել դրանց հասնելու ուղիներ և ծրագրել սեփական գործը.

2) հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները (եզրերը), հասկացությունները և արտահայտությունները,

դ. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

ե. օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն.

3) համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ. սովորել և սովորեցնել,

գ. դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ. սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե. բախումնային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ. ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

է. գերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից, կանխակալ մոտեցումներից,

ը. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն.

4) ստեղծագործական կարողություններ ենթաբաղադրիչը նպատակ ունի զարգացնելու սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները, բ. դրսևորել ստեղծագործական երևակայություն,

գ. երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին, դ. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները.

5) ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ. գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,

գ. ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ (ռեժիմ), վերահսկել սեփական վարքը,

դ. խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք, է. զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,

զ. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

3. Արժեքային համակարգ

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, զթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>>, պետական ոչ առևտրային կազմակերպության (կրճատումով)

42. Դասարանի ղեկավարը (ղասղեկը)

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,

բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.

գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,

դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին

ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային

հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,

զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.

է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,

բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման

գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.

դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.

ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները

զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:

74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:

75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:

78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկություններ աշակերտների մասին	2-3
Կրթարարական գործունեության աշխատանքների շտաբի կողմից իրականացվող գործունեությունները	4-9
Դասագրքերի բաշխումը	10-11
Դասարանի սանտահիգիենային և կրթամթերճային, սահմանափակ եզրագծերի սինկրոնիզացիան, աշակերտների սանտահիգիենային և կրթամթերճային աշխատանքները	12
Գեղարվեստական, երաժշտական և սպորտապարտեզային	13
Դասարանի արտագրքային աշխատանքների թեմատիկա	14
Դասարանի աշխատանքները ընդհանուր դասարանային, սոցիալապես անբարենպաստ պայմաններում գնահատելու, Ծնողաքննարկ աշակերտների ձև	15
Դասարանի արտակարգ դեպքեր	16
Ծնողային ժողովներ, աշխատանք Ծնողների ձև	17
Աշխատանք Ծնողներին ձև	18
Դասարանի բնութագրի ուսումնական արդյունքներ	19
Նշումների եզրագծերի կողմից իրականացվող գործունեությունների ձև	20

Կրթադաստիարակչական Աշխատանքների Հիմնական Ուղղությունները

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է 4 հոգուց: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ: Աշակերտները համերաշխ են, մեկը մյուսի նկատմանը հարգալից են:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուս. տարվա ընթացքում

2023-2024 թթ. Ուսումնական տարում իրականացնել ուսուցման պրոցեսի հիմնական ֆունկցիաները՝ կրթական, դաստիարակչական, զարգացնող:

Կրթական ֆունկցիաներ՝ գիտական գիտելիքների յուրացում, համաուսումնական կարողությունների և հմտությունների յուրացում:

Դաստիարակչական ֆունկցիաներ ձևավորել աշակերտների աշխարհայացքի, բարոյկան և զարգացնող ֆունկցիաները:

Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել կարգապահությունը, օրվա ռեժիմի պահպանումը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն - Երեխաներին տարբեր աղանդներից, վնասակար ազդեցություններից զերծ պահելու համար անցկացնել զրույց՝ <<Մեկ ազգ, մեկ հավատ, մեկ եկեղեցի>> թեմայով: Ծանոթացնել նրանց եկեղեցական տոների հետ և անցկացնել զրույց:

3.2 Գեղագիտական դաստիարակություն – Երեխաների գեղագիտական ճաշակը բարձրացնելու համար՝ ստեղծել պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն ստեղծագործական աշխատանք կատարի: Նրանց մեջ զարգացնել գեղեցիկը նկատելու և ընկալելու ունակությունները:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն- Կազմակերպել և անցկացնել հայրենասիրական զրույցներ, բերել լավագույն գինվորների օրինակները: Դաստիարակել հայրենասեր քաղաքացի: Այցելել պանթեոն և ծաղիկներ դնել զոհված հերոսների շիրիմներին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն – Ձևավորել ֆիզիկական որակներ յուրաքանչյուր աշակերտի մեջ: Անցկացնել գրույցներ <<Սպորտն առողջություն է>>, <<Առողջ մարմնում , առողջ հոգի>> թեմաներով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն- Աշխատանքային որակների ձևավորում, զարգացում և լուրջ մոտեցում աշխատանքի նկատմամբ: Մեզ շրջապատող բնությունը՝ ինամել՝ գիտակցելով այն փաստը, որ մեզ առջություն պարզևողը նա է:

3.6 Բնապահպանական դաստիարակություն – Ձևավորել բնապահպանման բարոյականության, զգացում, պատասխանատվության, ինամբ բնության յուրաքանչյուր արարածի, մասնիկի նկատմամբ:

3.7 Դպրոց-ընտանիք կապը- Հաճախակի կազմակերպել ծնողական գրույցներ, ժողովներ, անցկացնել անհատական գրույցներ յուրաքանչյուր ծնողի հետ, փորձել նրանց հետ լավ հարաբերություններ պահպանել:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1 շաբաթ	Զրույց՝ նվիրված գիտելիքի օրվան:	Սեպտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
2 շաբաթ	Դասարանի ակտիվի, աշակերտական խորհրդի, դասարանի ավագի ընտրություն:	Սեպտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
3 շաբաթ	Դասարանի կարգապահական կանոնների սահմանում:	Սեպտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
4 շաբաթ	Վարքականոններ: Քո վարքագիծը տանը և դպրոցում:	Սեպտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
5 շաբաթ	Ընկերության և սեռերի հավասարություն:	Հոկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
6 շաբաթ	Մարդու և բնության անքակտելի կապը:	Հոկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
7 շաբաթ	Զրույց-քննարկում՝ «Ինչպես կառավարեմ հույզերս»:	Հոկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
8 շաբաթ	Ինտերակտիվ խաղ՝ «Աշնանային երանգներ»:	Հոկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
9 շաբաթ	Զրույց՝ «Բնությունն ու նրա պահպանությունը»:	Նոյեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
10 շաբաթ	Զրույց «Պահպանենք մեր մոլորակի էկոլոգիան» թեմայով:	Նոյեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
11 շաբաթ	Իմ իրավունքները և պարտականությունները:	Նոյեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
12 շաբաթ	Միշտ պետք է լինե՞լ համբերատար և ներողամիտ:	Նոյեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
13 շաբաթ	Ո՞րն է հաջողության գրավականը:	Դեկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
14 շաբաթ	Ընկերը ճանաչվում է դժբախտության պահին:	Դեկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
15 շաբաթ	Բնության տեսակները և թյուրընկալումները:	Դեկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
16 շաբաթ	Զրույց՝ «Ջուրն ու նրա հիմնախնդիրները»:	Դեկտեմբեր 2023թ.	Դասղեկ, աշ.
17 շաբաթ	Բուլլինգի տեսակները:	Հունվար 2024թ.	Դասղեկ, աշ.

18 շաբաթ	Առողջ ափսե, սննդանյութերի հիմնական խմբերը:	Հունվար 2024թ.	Դասդեկ, աշ.
19 շաբաթ	Ինքնագնահատական, ինքնավերաբերմունք	Հունվար 2024թ.	Դասդեկ, աշ.
20 շաբաթ	Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները, թեմայով զրույց:	Փետրվար 2024թ.	Դասդեկ, աշ.

21 շաբաթ	Զրույց-քննարկում ` « Կոնֆլիկտներ և դրանց լուծումը»:	Փետրվար 2024թ.	Դասղեկ, աշ.
22 շաբաթ	Զրույց-քննարկում` « Ընտանիքի դերը հասարակության կյանքում»:	Փետրվար 2024թ.	Դասղեկ, աշ.
23 շաբաթ	Մպառողների իրավունքները:	Փետրվար 2024թ.	Դասղեկ, աշ.
24 շաբաթ	Ազատվենք կարծրատիպերից:	Մարտ 2024թ.	Դասղեկ, աշ.
25 շաբաթ	Դժվարություններ, որոնց ես բախվում եմ:	Մարտ 2024թ.	Դասղեկ, աշ.
26 շաբաթ	Ժամանակ ` ամենաթանկը մեր կյանքում:	Մարտ 2024թ.	Դասղեկ, աշ.
27 շաբաթ	Հաղորդակցում. Ինչպես հաստատել շփում:	Ապրիլ 2024թ.	Դասղեկ, աշ.
28 շաբաթ	Միասնական լինելը:	Ապրիլ 2024թ.	Դասղեկ, աշ.
29 շաբաթ	Հայ զինվոր:	Ապրիլ 2024թ.	Դասղեկ, աշ.
30 շաբաթ	Հայրենիքի պաշտպան:	Ապրիլ 2024թ.	Դասղեկ, աշ.
31 շաբաթ	Հայոց բանակ թեմայով զրույց:	Մայիս 2024թ.	Դասղեկ, աշ.
32 շաբաթ	Քննարկում: Հոգեբանական թեսթի անցկացում և վերլուծություն:	Մայիս 2024թ.	Դասղեկ, աշ.
33 շաբաթ	Ուսումնական տարվա ավարտ:	Մայիս 2024թ.	Դասղեկ, աշ.
34 շաբաթ	Ամփոփում:	Մայիս 2024թ.	Դասղեկ, աշ.

ԴԱՍԱԳԻՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Անվանումը	Հայոց Լ			Հայ գրակ			Ռուսաց Լ			Անգլերեն			Համաշխ. պատմություն			ՆԶՊ			Հանրահ			Երկրաչափ			Ֆիզիկա		
	Դասանախյանի համարը	ստացվել է	վարձավճար	հանձնվել է	ստացվել է	վարձավճար	հանձնվել է	ստացվել է	վարձավճար	հանձնվել է	ստացվել է	վարձավճար	հանձնվել է	ստացվել է	վարձավճար	հանձնվել է	ստացվել է	վարձավճար	հանձնվել է	ստացվել է	վարձավճար	հանձնվել է	ստացվել է	վարձավճար	հանձնվել է		
1	+	460		+	460		+	420		+	490		+	420		+	330		+	460		+	460		+	360	
2	+	460		+	460		+	420		+	490		+	420		+	330		+	460		+	460		+	360	
3	+	460		+	460		+	420		+	490		+	420		+	330		+	460		+	460		+	360	
4	+	460		+	460		+	420		+	490		+	420		+	330		+	460		+	460		+	360	

ԴԱՍԱԳԻՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Անվա- Նումը	Քիմիա			Կենսաբ			Աշխարհ			Ինֆորմ			Հայոց պատմ			Հասարակագի տ.			ՀԵՊ		
	ստացվ վարձավճար	Հանձնեց		ստացվ վարձավճար	Հանձնեց		ստացվ վարձավճար	Հանձնեց		ստացվ վարձավճար	Հանձնեց		ստացվ վարձավճար	Հանձնեց		ստացվ վարձավճար	Հանձնեց				
1	+	360		+	360		+	410		+	350		+	410		+	380		+	300	
2	+	360		+	360		+	410		+	350		+	410		+	380		+	300	
3	+	360		+	360		+	410		+	350		+	410		+	380		+	300	
4	+	360		+	360		+	410		+	350		+	410		+	380		+	300	

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

Խամար	Նախասիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական Երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1	Մեդիագրագիտություն		Մարզախաղեր	Ռեբոտաշինություն
2	Ասմունք			
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				
23				
24				
25				
26				
27				
28				
29				
30				

31				
32				
33				
34				
35				

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դատելի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը	Ցանկություն
Մեկտեմբեր 2023թ.	Զրույց՝ նվիրված գիտելիքի օրվան:	
Մեկտեմբեր 2023թ.	Դասարանի ակտիվի, աշակերտական խորհրդի, դասարանի ավագի ընտրություն:	
Մեկտեմբեր 2023թ.	Դասարանի կարգապահական կանոնների սահմանում:	
Հոկտեմբեր 2023թ.	Վարքականոններ: Քո վարքագիծը տանը և դպրոցում:	
Հոկտեմբեր 2023թ.	Ընկերության և սեռերի հավասարություն:	
Հոկտեմբեր 2023թ.	Մարդու և բնության անքակտելի կապը:	
Հոկտեմբեր 2023թ.	Զրույց-քննարկում՝ «Ինչպես կառավարեմ հույզերս»:	
Հոկտեմբեր 2023թ.	Ինտերակտիվ խաղ՝ «Աշնանային երանգներ»:	
Նոյեմբեր 2023թ.	Զրույց՝ «Բնությունն ու նրա պահպանությունը»:	
Նոյեմբեր 2023թ.	Զրույց «Պահպանենք մեր մոլորակի էկոլոգիան» թեմայով:	
Նոյեմբեր 2023թ.	Իմ իրավունքները և պարտականությունները:	
Նոյեմբեր 2023թ.	Միշտ պետք է լինե՞լ համբերատար և ներողամիտ:	
Դեկտեմբեր 2023թ.	Ո՞րն է հաջողության գրավականը:	
Դեկտեմբեր 2023թ.	Ընկերը ճանաչվում է դժբախտության պահին:	
Դեկտեմբեր 2023թ.	Բոնության տեսակները և թյուրընկալումները:	
Դեկտեմբեր	Զրույց՝ «Չուրն ու նրա հիմնախնդիրները»:	

2023թ.		
Հունվար 2024թ.	Բուլլինգի տեսակները:	
Հունվար 2024թ.	Առողջ ափսե, սննդանյութերի հիմնական խմբերը:	

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Դասալսման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ցանկություն
15.09.2023թ.	Ուսումնական տարվա սկիզբ:	Քննարկեցինք ուսումնական տարվա ընթացքում առաջացող որոշ հարցեր:	

--	--	--	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

Հոդված 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈՂՎԱԾ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

- 4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 5. Միջնակարգ կրթություն պետական ուսումնական հաստատություններում անվճար է:
- 6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրակրթությունը ննպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

- 1) հանրակրթական մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
- 2) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՆԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈՂՎԱԾ 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրատարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Արգելվում է առանց ձեռնի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

ՀՈՂՎԱԾ 11. Երեխայի կրթության իրավունքը Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով

- Կրթության բովանդակությունն ապահովում է՝
 - 1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.
 - 2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.
 - 3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.
 - 4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

- 4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:
- ՀՈՂՎԱԾ 20. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:
 - 2. Սովորողն իրավունք ունի՝
 - 1) ստանալու հանրակրթական պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.
 - 2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
 - 3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.
 - 4) մասնակցելու ներդրողական և արտադրողական միջոցառումների.
 - 5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ռոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.
 - 6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
 - 7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
 - 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

ՀՈՂՎԱԾ 20. (կրճատումով) Երեխայի հանգստի իրավունքը Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

ՀՈՂՎԱԾ 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք: Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ռոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն

իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. <<Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր>> մատյանը նախատեսված է դասղեկի կողմից դասարանի հետ բազմակողմանի դաստիարակչական աշխատանքների նպատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից համակարգելու, նախագծելու համար:
2. Դասղեկը աշխատանքային տարեկան ծրագիրը կազմելիս նպատակահարմար է հաշվի առնել՝
 - դաստիարակչական խնդիրների ճշտությունն ու իրատեսությունը,
 - Աշակերտների գործունեության կազմակերպման գույակցվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում,
 - դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը,
 - ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը,
 - աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհատական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատեսությունը,
 - տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է չլինեն ոչ չափից դուրս ընդհանուր, ոչ էլ շատ կադապարված, նեղ, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շրջապատը: Մատյանը հնարավորություն է տալիս դասղեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգելու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դարձնելու ոչ միայն

կատարվելիք աշխատանքները, այլն դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

Պլան-ծրագրի բաժինների հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

- Դասղեկի տարեկան ծրագիր-պլանը համարվում է ուսումնական հաստատության համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր-պլանի բաղկացուցիչը:
- Դասղեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի հաստատվում է տնօրենի կողմից:
- 10-րդ և 11-րդ էջերի, <<ստացավ>> և

<<հանձնեց>> պլանակներում համառոտագրել ստացվելիք և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները գերազանց –Գ, լավ –Լ, բավարար –Բ,

անմխիթար –Ա

Ուսումնական տարին ավարտելուց հետո դասղեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասղեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ I-IV, V-IX, X-XII, ավարտելը:

